

«ՓՐՕ ԷՏԻՔԱՍԻՕ» ԿԸ ԿԱՆԳՆԻ ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ԿԱՊԱԿՏՈՒԹԵԱՄԲ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԲԱՑԱ- ԴԱՏԻ ԿՈՂՔԻՆ

«Փրո Էտիքասիո» կոչուած մարմնի անունով եւ Վարդան Օզինեանի ստորագրութեամբ ստացանք հաղորդագրութիւն մը, որուն մէջ կը յայտնուի թէ Փրո Էտիքասիո կազմակերպութիւնը, Մելքոնեան հաստատութեան փակման դէմ Թուրքիոյ Հայոց Պատրիարքին կողմէ Կիպրոսի մէջ բացուած դատին կողքին կը կանգնի, հակառակ ինչ ինչ այլ տարակարծութիւններու:

Հաղորդագրութիւնը իմաց կուտայ թէ 8 Յուլիս Ուրբաթ, Նիկոսիոյ շրջանային դատարանի դատաւոր Տ. Միքայէլիտէս իր մօտ հրաւիրած է Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան Կիպրոսի ներկայացուցիչ Կորտըն Անտէրսընը եւ գայն յանդիմանած է դատաւորին կողմէ առնուած որոշումին դէմ գալու մեղադրանքով: Դատաւորը յիշեցուցած է որ դատարանը արգիլած է Մելքոնեան հաստատութեան փակումն ու վաճառքը, մինչեւ որ բացուած դատը վերջանայ:

Անտէրսըն խոստացած է նկատի առնել այս կէտը եւ 15 օր վերջ կրկին ներկայանալ դատարան ու բացատրութիւն տալ իր գործունէութեան մասին: Անտէրսընին փաստաբանն է Քրիս Թրիատաֆիլիտէս:

Հաղորդագրութիւնը դժբախտաբար շատ յստակ ու հասկնալի չէ: Վերի բացատրութիւններէն վերջ Վարդան Օզինեան կը գրէ հետեւեալը.

*

ՀԲԸՄԻ Նիւ Եորքի Կեդրոնական Խորհուրդին Մելքոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու 16 Մարտ 2004ի յայտարարութեամբ, Մելքոնեան Կտակը խախտած ըլլալուն պատճառաբանութեամբ Հայոց Պոլսոյ Պատրիարքութեան բացած դատին առաջին ունկնդրութիւնը տեղի պիտի ունենայ Նիկոսիոյ Շրջանային Ատեանին առջեւ, 25 Օգոստոս 2005ին, այլ դատաւորով մը:

Փրո-Էտուքասիո ներկայիս կը հաղորդէ որ Մելքոնեանի առաքելութեան տեսականութիւնը Նիկոսիոյ իր կալուածին վրայ պաշտպանելու եւ պահպանելու համար Պատրիարքութեան Նիկոսիոյ Դատական Ատեանին մօտ դիմումը ո՛չ միայն Պատրիարքութեան իրաւունքն է որպէս Մելքոնեան Կտակին ստորադիր, այլեւ՝ պարտականութիւնն է, որպէս պատասխանատուներէն մին իր ստորագրութեան վերեւ գտնուող Կտակին տառին ու ոգիին:

Կան կազմակերպութիւններ, նաեւ՝ անհատներ, որոնք համամիտ են ՀԲԸՄԻ Կեդրոնական Խորհուրդին ՄՀԿն փակելու եւ լուծարքի ենթարկելու որոշումին: Անոնց միջեւ են հայկական մարմիններու ներկայացուցիչներ, որոնք Մելքոնեանի հարցէն շեղելով կը ջանան այպանել Ն.Ա.Տ. Մետրոպ Բ. Պատրիարքը:

Փրո-Էտուքասիոն առանց ճապաղելու զանազան հարցերու մէջ, ներկայիս կը յայտարարէ թէ Պատրիարքարանին եւ հետեւաբար Պատրիարքին

Մելգոնեանի հարցին հանդէպ լուռ ու չէզոք կեցուածք մը որդեգրելը պիտի որակէին յանձնառութեան դատապարտելի քերացում: Ուրեմն Պատրիարքութեան Մելգոնեանի համար շղթայազերծած դիմումներու կողքին ենք եւ աջակից: Ի դէպ՝

1) Փրօ-Էտուրաթիօն, ՀԲԸՄի Մելգոնեանը փակելու իր որոշումը 16 Մարտ 2004ին հրապարակելէ շուրջ մէկուկէս տարի առաջ 12 Հոկտեմբեր 2002ին Մելգոնեանի ուսումնական, վարչական ու գանձատրային հարցերու մասին հոգաբարձուի մը պատասխանելով, թափանցիկ յստակ հաշուետուութեան անհրաժեշտութիւնը արտայայտած է ու յամենայնդէպս Մելգոնեանի փակման, նաեւ կալուածին վաճառման որեւէ պատճառաբանութիւնը նկատած պատրուակ:

2) Փրօ-Էտուրասիօ, այլ երկիրներու իր զբաղումներու կարգին, Կիպրոսի մէջ ունի միակ հարց մը, որ է Մելգոնեանի տեսականութեան ի նպաստ գործել: Սա Կիպրահայոց ներքին խնդիրը չէ, ոչ ալ միայն զանազան երկիրներու մէջ հաստատուած եւ իրենց վարժարանով հետաքրքրուող պարտաճանաչ Մելգոնեանցիներուն մտահոգութիւնը: Մելգոնեանի հարցը ժողովուրդի մը մշակոյթին մէջ կրթական գործունէութեան հարցն է: Հետեւաբար ան համահայկական է, նաեւ՝ համամարդկային: Ո՛չ ապաքէն մշակոյթի ազատութիւնը եւ անոր պատրաստող կրթութիւնը մարդկային իրաւանց հարց է:

3) Փրօ-Էտուրասիօն կողքին է Պատրիարքին Կիպրոս ներկայացուցած դիմումին եւ անոր աջակից: Քանի որ Կիպրոսի իր երբեմնի խորհրդատու եւ երկրին անցեալի ընդհանուր դատախազին միջոցաւ Պատրիարքութեան դիմումին պաշտպան փաստաբաններու խումբին հայթայթած է Մելգոնեան կտակին վաւերական պատճէնը: Այսինքն դիմումը հիմնաւորող միակ էական փաստաթուղթը:

Նոյն փաստաթուղթին վրայ հիմնուած են Փրօ-Էտուրասիօն Մելգոնեանի առընչուող պաշտօնական դիմումները, նաեւ՝ հանրային յայտարարութիւններն ու հաղորդագրութիւնները, որոնք խնդիրը կը տարագաւորեն մարդկային իրաւանց յարգանքի կիրարկութեան կոչով մը եւ հարցումով մը: Հարցումը հետեւեալն է. որո՞ւ կը պատկանի Մելգոնեանը: Այս հարցումին պատասխանը բնոյթն ունի կրճատելու երկարապատում եւ երկարատեւ դատարանային գործընթաց մը: Ուստի կարելիութիւնն ունենալ Մելգոնեանը շուտով վերաբանալու: Մինչդեռ, պատրիարքութեան խորհրդականները նախընտրած են երկար ճամբան. նախ դիմելով Լոս Անճէլըսի դատական ատեաններուն, ապա՝ Կիպրոսի դատաւորներուն: Միայն այս վերջիններն են որ Մելգոնեանի հարցի համար կը ներկայացնեն իրաւագիտականօրէն անվիճելի իշխանութիւնը:

Նախընտրութիւնները ինչ որ ալ ըլլան, Պատրիարքութիւնը այնքան ատեն որ Մելգոնեան կտակին համաձայն եւ ըստ Մարդկային Իրաւանց օրէնքներուն շարունակէ իր ընթացքը, տեսականացնելու համար Մելգոնեանի առաքելութիւնը անոր ամբողջական կալուածին վրայ, Փրօ-Էտուրասիօն այս հարցին մէջ կը մնայ Պատրիարքութեան կողքին եւ աջակից, ի հեճուկս բոլոր տարբերութիւններուն:

9 Յուլի 2005